ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/177 «30» 04 2026 թ.

«Դ.Ջ.Ա.» ՍՊ ընկերության տնօրեն
Ն. Ներսիսյանին
(ՀՎՀՀ 02331845)
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան,Մալաթիա Սեբաստիա, Կիլիկիա թաղ. 46փ.,
Էլ. հասցե՝ nairanersisyan11@gmail.com
Հեռ.՝ 093763450

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Դ.Ջ.Ա.» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կատարող) միջև 10 մարտի 2026 թվականին կնքված ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-Ա-23/2026 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերությունը պարտավոր էր իրականացնել ՀՀ ՆԳՆ երեք ստորաբաժանումներում ընթացիկ շինվերանորոգման աշխատանքներ, մասնավորապես՝

- առաջին չափաբաժնով՝ ՀՀ ՆԳՆ պարեկային ծառայությունում և օպերատիվ կառավարման կենտրոնում (2,280,000 (երկու միլիոն երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամի չափով),
- երկրորդ չափաբաժնով՝ ՀՀ ՆԳՆ Երևան քաղաքի ոստիկանության վարչական շենքի 4-րդ հարկում (1,788,000 (մեկ միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամի չափով),
- երրորդ չափաբաժնով՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Կոտայքի մարզի գումարտակում, (1,068,000 (մեկ միլիոն վաթսունութ հազար) ՀՀ դրամի չափով)

սակայն, նախատեսված երեք չափաբաժիններից մասնակի իրականացվել են առաջին և երկրորդ չափաբաժիններով նախատեսված աշխատանքները, որոնց դիմաց ներկայացված ֆինանսական փաստաթղթերի հիման վրա վճարվել է 604,678 (վեց

հարյուր չորս հազար վեց հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ: Միևնույն ժամանակ երրորդ չափաբաժնով նախատեսված աշխատանքների իրականացումը մինչ օրս չի մեկնարկել:

Նշվածի կապակցությամբ 2026 թվականի մարտի 30-ին Կատարողին ներկայացվել է նախազգուշացման գրություն (թիվ 15/13/88937-26)՝ պահանջելով աշխատանքները իրականացնել սահմանված ժամկետներում՝ պատշաճ որակով: Այնուամենայնիվ աշխատանքները չեն իրականացվել մինչ օրս:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի այն է՝ «պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից»:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և Կատարողը խախտել է աշխատանքի կատարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 7.11-րդ կետը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի մասնակի լուծում է ՀՀ ներքին գործերի նախարարության և « Դ.Ջ.Ա. » ՍՊ ընկերության միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-Ա-23/2026 ծածկագրով գնման Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի մասնակի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Ընկերությանը տրվում է 8 օրացուցային օր սահմանված տուգանքը 0.5% (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ 25,680 (քսանհինգ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամը և սահմանված տույժը յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05% (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով՝

1. առաջին չափաբաժնի մասով՝ 4,795 ՀՀ դրամ (1,918,014 × 0.05% × 5 օր),
2. երկրորդ չափաբաժնի մասով՝ 3,863 ՀՀ դրամ (1,545,308 × 0.05% × 5 օր),
3. երրորդ չափաբաժնի մասով՝ 2,670 ՀՀ դրամ (1,068,000 × 0.05% × 5 օր),

ՀՀ դրամը վճարելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար՝ 925,563.45 (ինը հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր վաթսուներեք հազար և քառասունհինգ լումա) ՀՀ դրամը և պայմանագրի ապահովման գումար՝ 677,510.1 (վեց հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր տաս և մեկ լումա) ՀՀ դրամը փոխանցելու համար ՀՀ ՖՆ

գործառնական վարչության համապատասխանաբար N 900008000698 և N 900008000664 հաշվեհամարներին:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, «Դ.Ջ.Ա.» ՍՊ ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Պարտականությունները կատարող **Խ. Իգիթյան**